

# Ոստիկանական հնարքները ավելի են կոփում քաղաքացու կամքը



*Հարցազրույց փաստաբան Տիգրան Եգորյանի հետ:*

**Անցած տարի, 2013 թ նախագահական և Երևանի ավագանու ընտրություններից հետո, տարին աչքի ընկավ քաղաքացիական աննախադեպ ակտիվությամբ, որոնք էին այդ ակտիվության նախադրյալները և ի՞նչ տվեցին դրանք:**

Առհասարակ ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության հիմքը իրավագիտակից և բողոքի ձայն բարձրացնելու, պայքարելու պատրաստ քաղաքացիներն են: Հետևաբար ամենաէականն այն է, որ մեր երկրում այդ որակի քաղաքացիների թիվն ավելանա, իսկ բողոքի առիթների և պատճառների պակաս, կարծում եմ, չունենք, խնդիրներն անթիվ են ու անհամար:

**Քաղ. ակտիվությունը առաջ է բերում ոստիկանության հետ հարաբերվելու անհրաժեշտություն, համամիտ ե՞ք այն կարծիքների հետ, որ ոստիկանության գործողություններում առկա են դրական փոփոխություններ, որ ոստիկանությունը բարեփոխվել է:**

Ոստիկանության տարբեր ներկայացուցիչներ փորձում են ներկայացնել առաջընթացը, սակայն ամբողջ խնդիրն ուսումնասիրվող ժամանակահատվածն է. Եթե համեմատենք 2007-2008թթ-ի հետ, երբ մարդիկ զանգվածաբար ռեպրեսիաների էին ենթարկվում, ապա ամենաէականն ու որոշիչ տարբերությունն այն է, որ այն ժամանակ հանրահավաքները լրջագույն սպառնալիք էին իշխանությունների համար և ողջ պետական մեքենան կենտրոնացվել էր այդ սպառնալիքի դեմ: Իսկ հիմա տեղի ունեցող բողոքի ակցիաները քաղաքական չեն այնքանով, որքանով ուղղված չեն իշխանափոխության, նախագահի, կառավարության կամ ազգային ժողովի փոփոխությանը, այլ ընդամենը առանձին հարցերի շուրջ իրենց բողոքի ձայնը իշխանությունների առջև բարձրացնելու փորձեր են, որոնք դուր տեսնում եք, թե ինչպիսի ջանադրությամբ են ճնշվում: Այժմ նույնիսկ 40 հոգանոց հավաքները ցրվում են իրենց իրավունք պարտականություններին լիարժեք չտիրապետող ոստիկանների «օրինական պահանջները չկատարու պատրվակով»:

**Բողոքի ակցիաների ժամանակ արձանագրվեց նաև մի իրողություն, երբ կոնկրետ խնդիրներով բողոքի ակցիաները նախաձեռնում և իրականացնում է բնակչությունը, նրանց աջակցում են քաղաքացիական ակտիվիստները և ոստիկանության բաժանմունքներ բերման են ենթարկվում ակտիվիստները: Ինչպես, օրինակ Կոմիտաս 5-ում կամ Օհանավանում: Որն է սրա տրամաբանությունը:**

Նախ՝ նշեմ, որ բնակիչների և ակտիվիստների բաժանումը խիստ արհեստական է: Գոյություն ունեն 22 քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող հայաստանաբնակ անձինք, ովքեր ունեն իրավունքներ՝ երաշխավորված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և 22 Սահմանադրությամբ: Յուրաքանչյուրը պետք է պայքարի իր իրավունքների համար և որքան ավելի շատ են պայքարողներն ու չհանդուրժողները, այնքան ավելի ենք մոտենում ժողովրդավարական պետություն և քաղաքացիական հասարակություն ունենալու երազանքին: Այս պահին կարելի է միայն ասել, որ ավելի քիչ են իրենց իրավունքների համար պայքարի ելածները: Ինչ վերաբերում է ժողովրդին չճանաչող իշխանության ու ոստիկանության տրամաբանությանը, ապա ամեն ինչ պարզ է՝ ճնշել առավել ակտիվներին: Այդ մասին խոստովանում են նույնիսկ առանձին ոստիկաններ: Որպես օրինակ կարելի է նշել Ե. Ներսիսյանին բերման ենթարկված և մարմնական վնասվածքներ պատճառած ոստիկանների բացատրությունները:

**«Ոստիկանության օրինական պահանջը չկատարելը» ակտիվիստներին բերման ենթարկելիս ամենակիրառական մեղադրանքներից է, ինչը հնարավորություն է բերման ենթարկելու ցանկացած իրադրության մեջ, արդյոք, ոստիկանության կողմից սա չարաշահում չէ և ի՞նչ անել նման իրավիճակում:**

Իրականում այն մեթոդը, որն իրականացնում է ոստիկանությունն օրինական չէ և իրավաչափ չէ: Այդ ամենը կատարվում է բացառապես մի նպատակով՝ խոչընդոտել մարդկանց հավաքներ անցկացնելու, բողոքի ձայն բարձրացնելու իրենց իրավունքների իրացմանը և դժգոհության նոր ալիքի առաջացումը, իսկ այդ նպատակին հասնելու ճանապարհին խախտվում են բազմաթիվ քաղաքացիների իրավունքներ, որովհետև մեծ հաշվով նրանք թքած ունեն այդ իրավունքների վրա:

**Ոստիկանությունը ակտիվիստների կողմից ճանապարհ փակելը ներկայացնում է որպես այլոց իրավունքների իրացման խոչընդոտում, ակտիվիստները սրան պատասխանում են, որ Մերժ Մարգարյանի շքախմբի երթևեկության պատճառով ևս ճանապարհներ են փակվում, արդյո՞ք սրանք կարելի է դիտել որպես համարժեք երևույթներ և կարող է ճանապարհ փակելը դիտվել որպես սահմանադրական իրավունքի իրացում:**

Այս դեպքում անհրաժեշտ է բացահայտել նպատակը, արդյոք, ոստիկանության գործողություններն իրավաչափ են: Երբ մարդիկ իրացնում են հավաքներ անցկացնելու, միավորվելու և բողոքելու իրենց իրավունքը՝ փակելով ինչ-որ փողոց կամ հրապարակ, սահմանափակելով այլ անձանց այդ նույն տարածքներից անարգել օգտվելու իրավունքը, դա չի նշանակում որ իրավաչափ է հավաքը ցրել այլ անձանց իրավունքների պաշտպանության պատրվակով, այստեղ ևս առկա է հանրային և մասնավոր շահերի բախում, ուր գերակայում է հանրայինը, որովհետև ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ է ապահովել հանրային գերակա շահը մասնավորի նկատմամբ:

Ավելին, այլ անձինք կարող են իրացնել հավաքի, բողոքի հետ չկապված իրենց իրավունքները՝ շրջանցելով արգելափակված փողոցներն ու հրապարակները, իսկ խաղաղ հավաքի միջոցով մասնակիցները չեն կարող հասնել իրենց նպատակին՝ առանց որևէ մեկի իրավունքի սահմանափակման: Հարավոր չէ մի քանի հարյուր մարդ մեկ վայրում հավաքվելու պարագայում ապահովել այդ հավաքի վայրից անարգել օգտվելու՝ մյուսների հնարավորությունը: Սա այն իրավիճակն է, երբ մարդիկ գոհում են իրենց անձնականը հանուն ընդհանուրի և հենց ընդհանուրի շահն է համարվում հանրային գերակա քաղաքացիական հասարակություններում:

**Քաղ. ակցիաների հետևանքով բազմաթիվ գործեր են հարուցվել, որոնք գտնվում են վարչական դատարանում, ինչպես է կգնահատեք դատարանի կողմից արդարադատության իրականացումը ակտիվիստներին առնչվող գործերով:**

Գնահատական տալ այս պահին դժվարանում եմ, քանի որ ընդամենը երկու վճիռ ունենք, սակայն բոլոր գործերով բոլոր այսպիսիներում, ինչպես նաև Եվրոպական դատարանում անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու հետևողական պայքարն է, որ պետք է երաշխավորի արդարադատությունը, ինչպես հայտնի է, մեր երկրում դատական իշխանությունը, որպես անկախ և ինքնուրույն իշխանություն, դեռևս կայացած չէ և հաճախ չի կարողանում հակադրվել գործադիր իշխանությանը:

**Հայտնի են մի շարք դեպքեր, երբ ոստիկանությունը հետ է վերցրել ակտիվիստների դեմ իր ներկայացրած բողոքները, ինչպես կմեկնաբանեք ոստիկանության այս քայլերը:**

Միայն 2013թ. երկրորդ կեսին տեղի ունեցած բողոքի տարբեր ակցիաներից բերման ենթարկվածների թիվն անցնում է 500-ը: Նրանց միայն մի մասի վերաբերյալ են կազմվել վարչական իրավախախտումների արձանագրություններ և միայն մի մասն են ուղարկվել դատարան, իսկ արդեն դատարանում հայցերի մի մասից էլ հրաժարվել է ոստիկանությունը: Հայցերից հրաժարվելու առաջին պատճառը՝ նպատակին (հավաքը ցրել) հասնելուց հետո ռետուրս չվատնելն է քանի որ ոստիկանության թե մարդկային, թե ինտելեկտուալ ռետուրսը սահմանափակ է, իսկ արդեն դատարաններում գործում է, գոնե առերևույթ, քիչ թե շատ հիմնավոր թվացող հայցերը պաշտպանելու, իսկ մյուսների վրա կրկին ռետուրս չվատնելու տրամաբանությունը (ինչպես ձեռք հայտնի է բերման ենթարկվածների թվում կան մարդիկ ովքեր փողոցի բանուկ հատվածից են բերման ենթարկվել և մարդիկ ովքեր մայթերից են բերման ենթարկվել): Վարչական դատարանում այս պահին կա մոտ 150 գործ և մի քանի այլ գործեր, որոնք կապված են բերման ենթարկված անձանց ոստիկանության աշխատակիցների կողմից մարմնական վնասվածքներ պատճառելու հետ, սակայն իրավապահ մարմինները հրաժարվում են դրանցով արդյունավետ քննություն կատարել, նույնիսկ քրեական գործեր չեն հարուցվում:

**Շատ անգամ մենք ականատես ենք լինում դեպքերի, երբ ոստիկանության ներկայացուցիչներին դժվար է լինում հիմնավորել իրենց առաջ քաշած մեղադրանքները: Ընդհանուր առմամբ ինչպես եք գնահատում քաղակտիվիստների իրավական գիտելիքներն իրենց իրավունքները պաշտպանելիս:**

Միանշանակ է, որ իրենց իրավունքներին և պարտականություններին տիրապետելու հարցում ակտիվ մարդիկ գերազանցում են ոստիկաններին բոլոր առումներով, իսկ դատարաններում դրան ավելանում է մեր կողմից տրվող իրավական աջակցությունը: Տեղեկացնեմ, որ Հայաստանում կան իրավաբաններ և փաստաբաններ, ովքեր առաջին իսկ դեպքերի ժամանակ պատրաստակամություն են դրսևորել և առանց վարձատրության իրավաբանական օգնություն են ցուցաբերել բերման ենթարկված քաղաքացիներին թե ոստիկանության բաժանմունքներում և թե դատարաններում:

**Ակտիվ քաղաքացիների համար դատական պաշտպանվածության ապահովումը ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ քաղաքացիական շարժումների վրա:**

Դատական պաշտպանության ապահովումը նրանց զինում է համապատասխան գործիքակազմով իրենց հետագա պայքարն առավել իրազեկ, վճռական և նպատակային տանելու համար:

**Ինչ եք կարծում, մենք կարող ենք, ի վերջո, արձանագրել, որ քաղաքացիական ակտիվիստների նկատմամբ ոստիկանության անօրինական գործելակերպն ու բռնությունը իրենց նպատակին չծառայեցին՝ քաղաքացիական տարբեր շարժումները կան և շարունակում են ծնվել: Կարելի է ասել, որ ոստիկանությունը կամ իշխանությունները ձախողել են:**

Միանշանակ այդպես է, 2008-ից հետո մենք թևակոխել ենք իրավագիտակից անհատի և հզոր քաղաքացիական հասարակության ձևավորման նոր փուլ: Քաղաքացու այդ տեսակի առջև ոստիկանական ապարատի հնարքներն անգոր էն: Դրանք, ընդամենը, ավելի են կոփում քաղաքացու կամքը և պայքարելու վճռակամությունը, ինչը հենց հզոր քաղաքացիական հասարակության կայացումն է: Այդ գործընթացը ներկայումս ճիշտ ռեյսերի վրա է Հայաստանում և դրա ընթացքն այլևս անկասելի է:

<http://www.forrights.am/?ln=1&id =2&page id=37>